

Բացվեց Բյուրականի նորակառույց ամբուլատորիան

Մարտի 29-ին կայացավ Բյուրականի նորակառույց ամբուլատորիայի բացման արարողությունը, որին ներկա էին Արագածոտնի մարզպետ Գաբրիել Գյոզալյանը եւ ՀՀ առողջապահության նախարար Արմեն Մուրադյանը: Ամբուլատորիան կառուցվել է «Առողջապահական համակարգի արդիականացում» ծրագրի երկրորդ փուլի լրացուցիչ ֆինանսավորման ընթացքում անցկացված շինարարական մրցութների արդյունքում տնտեսված միջոցներով:

Արարողությունը սկսվեց Բյուրականի Սուրբ Հովհաննես եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Մամբրե քահանա Պատուրյանի օրհնության կարգով:

Շնորհավորելով բյուրականցիներին ամբուլատորիայի բացման կապակցությամբ, Արմեն Մուրադյանը նշեց, որ ամբուլատորիան պետության, միջազգային կազմակերպության, համայնքի, ինչպես նաև անհատ ներդրողի փայլուն համագործակցության արդյունք է:

Իր ողջունի խոսքում մարզպետ Գաբրիել Գյոզալյանը բնակչության անունից շնորհակալություն հայտնեց ՀՀ Նախագահին, ՀՀ կառավարությանը, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարին, համայնքի համար կարեւորագույն ծրագիրն իրականացնելու համար:

Ուշագրավ է, որ բացի համայնքի 5 տոկոս ներդրումից, անձնական մասնակցություն է ունեցել նաև Բյուրական համայնքի նախկին բնակիչ, շուրջ 20 տարի Մոսկվայում ապրող «Արմգրուպ» շինարարական ընկերության տնօրեն Տարիել Մարգարյանը, ով նվիրաբերեց նաև շտապօգնության մեքենա:

Բյուրական համայնքում նոր ամբուլատորիայի կառուցման եւ հագեցման նպատակով ներդրվել է շուրջ 73.7 մլն ՀՀ դրամ: «Հայաստանի առողջապահական համակարգի արդիականացում ծրագիր-2» հավելյալ ֆինանսավորման վարկային ծրագրի շրջանակում ԲԱ-ի երեք բժիշկ և երկու բուժքույր մասնագիտացել են որպես ընտանեկան

բժիշկ և բուժքույր: Ամբուլատորիան սպասարկում է Բյուրական, Անտառուտ և Օրգով համայնքների շուրջ 5200 ազգաբնակչությանը:

«Առողջապահության նախարարը եւ մարզպետը այցելեցին նաեւ Աշտարակի բժշկական կենտրոնում, բուժանձնակազմի հետ քննարկվեցին բժշկական հաստատության զարգացման հնարավորությունները:

Մարզպետարանի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժին